

**ԱՌԱՄ-ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐԸ,
ԱՆԷԾՔ-ՕՐՀՆԱՆՔՆԵՐԸ ԵՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ
ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

ԱՐՄԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ
armen.sarkisyan.68@mail.ru

Արցախի բանահյուսութիւնը հայ ժողովրդական բանահիւսութեան բաղկացուցիչ մասն է: Բանահիւսական սեռերը բազմազան են, որոնց մէջ իրենց դիպուկ արտայայտութեամբ առանձնանում են առած-ասացուածքները, անէծք-օրհնանքները եւ հանելուկները: Բանահիւսական այս սեռերը յաւելեալ համ ու հոտ են տալիս լեզուին, առաւել պատկերաւորութիւն, գունային երանգներ ու միտքի եւ տեղադրութեան այլ տարածութիւններ են առաջացնում թէ՛ ասողի եւ թէ՛ լսողի մօտ:

ԱՌԱՄ-ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐ

Առածները փոխաբերական իմաստ ունեցող կարճ ու պատկերաւոր ասոյթներ ու դատողութիւններ են, որոնցում կեանքի տարբեր երեւոյթներ բնութագրում են սրամտօրէն ու կատարեալ ամբողջականութեամբ: Դրանք փաստօրէն հայ ժողովրդի դարաւոր կենսափորձի եւ հայեացքների խտացումներն են՝ գեղարուեստական մեծ ընդհանրացման հասած բանաձեւումների մէջ: Իրենց սեռի յատկանիշով առածներին գրեթէ համընկնում են ասացուածքները, այն տարբերութեամբ, որ սովորաբար գործածւում են առանց փոխաբերական իմաստի: Խոր են առած-ասացուածքների արմատները. դրանք գալիս են պատմութեան խորքերից եւ շատ դժուար, եթէ ոչ անհնար է բացայայտել, թէ որ դարաշրջանում է ստեղծուել դրանցից իւրաքանչիւրը:

Արցախեան առած-ասացուածքների մէջ արտայայտուած են բազմաթիւ ու բազմաբնոյթ երեւոյթներ: Առանձին խումբ են կազմում այն ստեղծագործութիւնները, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի արցախեան հատուածի ապրած միջավայրը, բնաւորութեան գծերը, կենսական պայմանները, քաղաքական կեանքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում:

Օտարը-Թուրքը-Ջաթիչը

Դարեր շարունակ արցախահայութիւնը կենաց ու մահու պայքար է մղել օտար զարփիչների դէմ՝ յաճախ ստիպուած լինելով դիմելու հարկադրական տեղաշարժերի: Դրա վառ արտայայտութիւնն է «Ալին քըլեցավ, Վալին յըլեավ!» (Ալին գնաց, Վալին եկաւ) առածը, որի ուղղակի իմաստը արտայայտում է օտար նուաճողների՝ իրար փոխարինելը:

Բագում դարերի կենսափորձով արցախցին յանգել է մի հետետութեան. թշնամու բարեկամութիւնը կեղծ է եւ ցանկացած պահի կարող է վնասել. պետք է զգուշ լինել՝ «Թօրքէն նըհըտ հընգըրօթուն ըրա, մըհակը ծըրքատ վէր մէլ տինիլ» (թուրքի հետ ընկերութիւն արա, բայց մահակը ձեռքիցդ ցած մի՛ դիր): Թշնամին անողոք է, բայց եւ վախկոտ, նրան պետք է պատժել. միայն այդ դէպքում նա կարող է հաշուի նստել քեզ հետ. «Թօրքէն չըքերանը թակիս վէշ, աշնա չի տըտնալ» (թուրքին մինչեւ չծեծես, բարեկամ չի դառնայ):

Պանդխտութիւնը

Ընկերային-քաղական կեանքն արտացոլող առած-ասացումքների մէջ առանձնանում են պանդխտութեան ստեղծագործութիւնները, որտեղ ներկայացւում է հայրենիքից ու ընտանիքից հեռացած պանդուխտի ծանր ողբերգութիւնը. «Ղարիբը օրիշին վըրէումը մինակ ըրտասունք կը թօղնէ» (պանդուխտը օրիշի հողում միայն արտասուք կը թողնի), «Ղարիբին հացը լըղէ յա, ճուրը՝ աղու» (պանդուխտի հացը լեղի է, ջուրը՝ դառը), «Ղարիբին հըրտէ մին օրը մին տարէ յա» (պանդուխտի համար մի օրը մի տարի է), «Ղարիբ մարթին վէզը ծօռ կինի» (պանդուխտ մարդու վիզը ծուռ կը լինի), «Ղարիբին հանգիստը առանց քար կինի» (պանդուխտի գերեզմանոցը առանց գերեզմանաքարի կը լինի):

Լաւատեսութիւնը

Սակայն, չնայած կեանքի ծանր պայմաններին, արցախցին յոռետես չէ. չկորցնելով պայծառ ապագայի հեռանկարն ու յոյսը՝ նա պայքարում է իր անկախութեան ու ազատութեան համար, անդադրում աշխատում. «Հայը ումէղավ ա ապրում» (հայը յոյսով է ապրում), «Հայը մինչըրէվ նըղանա վէշ, յըտ չի տըտնալ» (հայը մինչեւ չյոգնի, ետ չի դառնայ):

Հայրենի Բնաշխարհ

Մի շարք առած-ասացումքներում ներկայացւում է պատմական Արցախի բնաշխարհը՝ լեռներն ու ձորերը, գետերն ու առուները, դաշտն ու արօտը, քարն ու հողը. «Մարէն սըվէր կավը սարումը կը ծընէ» (սարին սովոր կովը սարում կը ծնի), «Մարերը ըրուտալին տըղէ ծօրէրըն ըն ըրօտում» (սարերը որոտալու փոխարէն ձորերն են որոտում), «Մարը հիշկան պէցուր ինի, կըլիւն ծուներ էնքան շատ կինի» (սարը ինչքան բարձր լինի, գագաթի ձիւնը այնքան շատ կը լինի), «Շրասիւնէ դըրաղէն վէր էշ թավիլ տա, մօխէրը ինձանալ կըտա» (Արաքսի ափին եթէ էշ թաւալուի, մօխիւրը ինձ կը կաշի), «Քյուտէն դարդը Քյուտան վարար ա» (Քուտի դարդը Քուտից վարար է):

Յատկանշական է, որ առած-ասացումաձևերում տեղ են գտել հիմնականում այն բոյսերն ու կենդանիները, որոնք աճում ու ապրում են Արցախի հողում եւ արցախցու կեանքում կարելուր դեր ունեն. «Խաղուն վեր հըսավ, ծըմերուկէն մըհալ քըցօղ չինիլ» (խաղողը եթէ հասունանայ, ձմերուկին ուշադրութիւն դարձնող չի լինի), «Դարաբաղցունը օթըն ա, թօթը, թիյին կօթը» (դարաբաղցու համար կարելուր է օդը, թութը, բահի կոթը), «Ճըղպօրէ ծառէն քարավ տըվօղ շատ կինի» (ընկուզենիին քար նետող շատ կը լինի), «Արտը վեր նըմըրդօթուն անէ, կավը տօնը կը պահէ» (արտը եթէ նամարդութիւն անի, կովը տունը կը պահի), «Էշը վեր կա, վըեսկէ յա թըրքում» (էշը որ կայ, ոսկի է արտաթորում), «Յըզգնանը քաշածը մինակ ուրան կաշին ա գյուղում» (եզան քաշածը միայն իր կաշին է իմանում), «Շօնը վեր շօն ա, ուրան թըզնըլատըղը թամուզ ա պահում» (շունը որ շուն է, իր նստելատեղը մաքուր է պահում), «Օխձան էլ ըն ճար շինում» (օձից էլ են դէղ պատրաստում):

Արցախցու Կենցաղը, Առօրեան Ու Հայեացքները

Առած-ասացումաձևերը յստակօրէն ներկայացնում են արցախցու կեանքի պատկերը, հասարակական կենցաղը, սովորոյթներն ու հայեացքները: Դարեր շարունակ աշխատաւոր գիւղացին ճնշուել ու հարստահարուել է ոչ միայն օտար զաւթիչների կողմից, այլեւ իր ազգակից տէրերից, քաջ գիտակցել հարուստների եւ աղքատների անհասարարութիւնը. «Ապրել կա՝ յըղ ա, ապրել էլ կա՝ լըղէ յա» (ապրել կայ՝ իղ է, ապրել էլ կայ՝ լեղի է), «Ապրել կա՝ արծաթ ա, ապրել կա՝ արկաթ ա» (ապրել կայ՝ արծաթ է, ապրել կայ՝ երկաթ է), «Ապրել կա՝ մըռնէլա փիս ա» (ապրել կայ՝ մեռնելուց վատ է), «Հարուստը ջուրէն ա թըխում, քյաւսիբը՝ ծույներէն» (հարուստը գրպանին է խփում, աղքատը՝ ծնկներին):

Կենցաղային Փոխարաբերութիւնները

Բազմաթիւ ստեղծագործութիւններում արտացոլուած են կենցաղային յարաբերութիւնները: Յատկապէս ակնառու են արիւնակցական-ազգակցական եւ ընտանեկան յարաբերութիւններն ու դրանց առնչուող երեւոյթները ներկայացնող առած-ասացումաձևերը, որտեղ ժողովուրդը տուել է ծնողի ու զաւակի, եղբոր ու քրոջ, ամուսնու ու կնոջ, հարսի ու սկեսրոջ բնութագիրը՝ բացայայտելով նրանց միջեւ եղած փոխարաբերութիւնը. «Մօրը աշկէն խօխան մըծանալ չի» (մօր աչքին երեխան չի մեծանայ), «Մօրը մին օրթնանքը օխտը վըրթըրբէղու անէսկ կը քանդի» (մօր մէկ օրինանքը եօթ վարդապետի անէծք կը քանդի), «Հօրը-մօրան կըման ըշխարքումըս ամմէն հինչ կըքըթէնվա» (բացի հօրից ու մօրից, աշխարհում ամէն ինչ կը գտնուի), «Հօրը-մօրը դադիրը չըգլիդօղը Հստուծէն դադիրը գլիդալ չի» (հօր եւ մօր յարգը չիմացողը Աստծոյ յարգը չի իմանայ),

«Ախճիգը տուսի պատ ա» (աղջիկը դրսի պատ է), «Տըղան տանը սըթունըն ա, ախճիգը՝ նըխշընըցարը» (տղան տան սինն է, աղջիկը՝ զար-դը), «Քուրըն ասում ա՝ ախպէր օնիմ, ախպէրըն ասում ա՝ քուր չօնիմ» (քոյրն ասում է՝ եղբայր ունեմ, եղբայրն ասում է՝ քոյր չունեմ), «Ախպէրը ախպօրը մըեռնէլը օգլի չի, փիս ապրէլը կօգլի» (եղբայրը եղբօր մեռնելը չի ցանկանայ, վատ ապրելը կը ցանկանայ), «Կընգանը պաղէվը մարթը կը պահէ, մարթինը՝ կընէցը» (կնոջ պատիւը ամուսինը կը պահի, ամուսնունը՝ կինը), «մարթինը կընէցըն ա, կընգանէնը՝ մարթը» (ամուսնունը՝ կինն է, կնոջինը՝ ամուսինը), «Հարթըն պըլօթուն ըրավ, ըսկէսվօրը քըլթը դըղէցէն» (հարսը խենթութիւն արեց, կէսրոջը պատժեցին), «Ըսկէսուրը ընգուճէն մինը քառ կը պահէ» (կէսուրը մի ականջը խուլ կը պահի) են։

Մարդկային Բնութագրումներ

Արցախեան առած-ասացուածքներում մեծ տեղ ունեն մարդու անձնական ու հասարակական յատկութիւններին, բնատրութեանն ու խառնուածքին նուիրուած բանաձեւումները։ Դրանցում ամենից առաջ վեր են հանում մարդու դրական յատկանիշները։

Ժողովուրդը խորհուրդ է տալիս գործ ունենալ բանիմաց, խելօք, անշահախնդիր մարդկանց հետ. «Խելունք մարթին նըհըւտ քար կըրէ, կլիժին նըհըւտ փըլավ մէ՛լ օտէլ» (խելացի մարդու հետ քար կրիր, գծի հետ փլաւ մի՛ կեր), «Խելունք դուշմանը կէս պարիկամ ա» (խելացի թշնամին կէս բարեկամ է)։ Այլ ստեղծագործութիւններում ներկայացում են մարդու բացասական յատկութիւնները՝ ազահութիւնը, շահամոլութիւնը, անբարոյութիւնը, գողութիւնը են. «Տանձը՝ ինձ, խընձօրը՝ ինձ, շըվթալու վէլ ա ըշտահըս տամ» (տանձն ինձ, խնձորն ինձ, դեղձ էլ եմ ցանկանում), «Մինին տօնը նի կացավ, էն մինը կըրակէն յըրա խըրաված ըրավ» (մէկի տունը հրդեհ ընկաւ, միւսը կրակի վրայ խորոված արեց), «Ղըխպին օխտը լուգու կինի» (անբարոյականին եօթ լեզու կը լինի), «Կյօղը ասից՝ հուրը օնէ, իմըն ա» (գողն ասաց՝ ով ունի, իմն է)։

Իմաստուն ու խորն են արցախցու հայեացքները աշխատանքի ու հասարակութեան՝ ժողովրդի մասին։ Պէտք է գնահատել աշխատանքը «Հշխըդանքէն կլինը գլիդօղը մարթինըն էլ կըցլիդա» (աշխատանքի գինն իմացողը մարդունն էլ կ'իմանայ)։ Աշխատանքը պահանջում է մեծ դժուարութիւններ «աշխադանքը էն ա շանը վըռոումը, հու տըղա յա, կըծէ, տուս օնէ» (աշխատանքը շան յետոյքում է գտնուում, ով տղամարդ է, կծի՝ հանի)։ Աշխատանքը ժողովրդի զբաղմունքն է, ժողովուրդն է աշխարհի բոլոր բարիքների ստեղծողը, եւ մարդը միայն հասարակութեան մէջ կարող է յաջողութեան հասնել. «Ժըղուվութթան տուս կըվօղէն յա՛

վեզը կը կօտըրէ, յա՛ պօզըր» (ժողովրդից դուրս եկողի կամ վիզը կը կօտրուի, կամ եղջիւրը):

Աստծու Կերպարը

Մի շարք ստեղծագործութիւններում արտացոլուած է Աստծոյ կերպարը: Ժողովուրդը հաւատում է ամենակարողի գորութեանը, ապաւինում նրա արդարադատութեանը, բարին ընդունելու, չարը պատժելու յատկութեանը. «Աստուծ ընօղէն ա տամ» (Աստուած անողին է տալիս), «Աստուծ հաց տըվօղէն հացը բօլ-բօլ ա անում» (Աստուած հաց տուողի հացը առատ է տալիս), «Աստուծ հըրօտօղ կըվէն պօզըր չի տամ» (Աստուած հարու տուող կովին պոզեր չի տալիս), «Աստուծ երկու ծըէքքավ ա տամ» (Աստուած երկու ձեռքով է տալիս), «Աստուծ դարդը տըվալ ա, դարմանըն էլ նըիըտըր» (Աստուած դարդը տուել է, դեղն էլ հետը): Սակայն ոչ միշտ է Աստուած արդար. երբեմն նա թոյլ է տալիս անարդարութիւններ. «Աստուծ վէր Աստուծ ա, էլիա դաթումը ծօտ պէներ ա անում» (Աստուած որ Աստուած է, երբեմն սխալ բաներ է անում), «Աստուծ լլավէն տանում ա, փիսին՝ թօղում» (Աստուած լալին տանում է, վատին՝ թողնում), «Աստուծ մինին յըէղում ա, մինին՝ դաղում» (Աստուած մէկին իղում է, միւսին՝ դաղում): Ահա թէ ինչու արցախցին խորհուրդ է տալիս երկնային տիրոջը՝ «Ա ստուծ, թա կարում չըս մըէզ պահիս, քըշա՛ ց՝ մունք քըրէզ ճըղպօրու մաչու նըման պահինք» (Աստուած, թէ չես կարող մեզ պահել, իջի՛ր, մենք թեզ ընկոյզի միջուկի նման պահենք):

Այսբանով չէն սպառում արցախեան առած-ասացածքներում արտայայտուած գաղափարները: Իրականում գրեթէ չկայ առօրեայ ու հասարակական կեանքի, մարդկային յարաբերութիւնների մի բնագաւառ, որ արծարծուած չլինի այդ սեռի ստեղծագործութիւններում:

Յամառ ու արդար է դարաբաղցին, կողքահաստ, խօսքը երեսին ասող, նա չի սիրում շողոքորթել, ասում է այն՝ ինչ մտածում է, անկախ նրանից՝ դա վիրաւորակա՛ն, թէ՛՞ հաճելի կը լինի դիմացինին. «Ղարաբաղցեն ըստըղավ – ընդըղավ չի ըղըրմ, խօսկը քյասմա յա ասում» (ղարաբաղցին այս ու այն կողմ չի ընկնում, խօսքը ուղիղ է ասում): Ահա թէ ինչու նրա խօսքը յաճախ է համեմուտ անէժք-օրինանքով:

ԱՆԷԾՔՆԵՐ ԵՒ ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

Ա. ԱՆԷԾՔՆԵՐ

Անէժքների եւ օրինանքների ամենաւիճիկ եւ տարածուած ըմբռնումը դրանց գերբնական ուժի հաւատն է, որի համաձայն անպայման իրագործում են դրանցում արտայայտուած ցանկութիւնները: Այդ են վկայում առայսօր պատմուող աւանդութիւնների, գրոյցների, հեքիաթների եւ այլ սեռերի ստեղծագործութիւններում տեղ գտած դիպումները:

Արցախեան ժողովրդական այդ ստեղծագործութիւններում առանձնապէս շեշտում է Աստծոյ անէծքի եւ օրհնանքի ազդեցութեան զօրութիւնը: Այսպէս, երիտասարդ կիւնը, երեխան գրկին, քարանում է, քանի որ ընդվզել է Աստծոյ գոյութեան դէմ. հովիւը, հրաժարուելով Քրիստոսին մի բաժակ կաթ տալուց, նրա անէծքով իր ոչխաների հոտի հետ վեր է ածում քարակոյտի: Այլ դէպքերում Աստծոյ օրհնութեամբ չոր ծառը դալարում է, կենդանանում է հիւրասէր ու աստուածավախ ծնողների մահացած որդին: Իրականութիւն են դառնում նաեւ հօր, մօր, կեսուրի, հարսի, աղքատ մարդու անէծքներն ու օրհնանքները: Իսկ չբեր կանանց անէծքներից զգուշանում են բոլորը. «Սօսգսըզ կընգանը անէսկը փրօնօղ կիւնի» (չբեր կնոջ անէծքը տեղ կը հասնի):

Ընդհանուր առմամբ անէծքն ու օրհնանքը իւրաքանչիւրիս սեփականութիւնն են. ամէն ոք կարող է օրհնել եւ անիծել, ինչպէս նաեւ եւթարկուել դրանց: Եւ ամէն ոք ոչ միայն սոսկ անիծել ու անիծուել, օրհնել ու օրհնուել, այլեւ հաւատացել է դրանց զօրութեանն ու իրականացմանը: Այլ բան է, որ, ըստ ժողովրդի ըմբռնման, դրանք պետք է լինեն տեղին ու արդարացի, այլապէս իրականութիւն չեն դառնայ:

Անէծքներն ու օրհնանքները ուղղակի խօսքեր են, որոնք ուղղուած են խօսակցին: Մակայն դրանք ամէնից առաջ ոչ թէ երկխօսութիւններ, այլ մենախօսութիւններ են, որոնք արտայայտում են խօսողի կողմից, եւ որտեղ խօսակցի ներկայութիւնն ու խօսքը ամէնեւին էլ պարտադիր չէ: Դրանց մէջ պարզապէս խօսողը իր ցանկութիւնն է ուղղում խօսակցին՝ լաւ թէ վատ, բարի թէ չար, եւ այդ ցանկութիւնը, կախուած լինելով խօսողի կամքից, ի վերջոյ արդիւնք է արտաքին որոշ դրդապատճառների: Տուեալ դէպքում խօսակիցը, նախքան անէծքի կամ օրհնանքի եւթարկուելը, խօսողի հանդէպ կատարում է որեւէ վատ կամ լաւ արարք, որից ելնելով էլ՝ խօսողը նրան է ուղղում իր անէծքը կամ օրհնանքը:

Կախուած այն հանգամանքից, թէ հոգեկան ինչպիսի գրգռածութեան է հասցրել խօսողին՝ խօսակցի արարքը, նոյնքան չարութեամբ կամ բարութեամբ է նա արտայայտում իր անէծքներն ու օրհնանքները:

Համեմատութեան դէպքում դժուար չէ որոշել անէծքների ու օրհնանքների հեղինակների գրգռածութեան աստիճանը: «Աղու օտիս» (թոյն ուտես), «Գյալժուր մընաս» (անհաւատ մնաս), «Աշկըտ հըւժա» (աչքդ ցաւի), «Ապըրիս տու» (ապրես դու), «Պէրանըտ քախժըր կէնա» (բերանդ քաղցր մնայ), «Շուքըվեր իկիս» (հովանաւոր լինես), «Բալատ թաղիմ» (երեխադ թաղեմ), «Ազգալ-ծուպալ ճինջվիք» (ազգով-ցեղով ո-չնչանաք), «Մազլերըտ տըլխտակէն սանդըրիմ» (մազերդ դազադում սանրեմ), «Ծառըտ ծաղկէ ասթիւր յօր օնէ» (ծառդ ծաղկի, աստղեր վերցնի), «Օխտը հարթնալ սուփրա-սէղան նըստիս» (եօթ հարսով սե-ղան նստես), «Աստուծ քյըւզ թէվեր տա, թըռչըցընէ» (Աստուած քեզ թեւեր տայ, թռցնի):

Միս կողմից, երբ մեկը հակաճառում է կամ ցուցաբերում իր խստասրտութիւնը, դիմելով նրան՝ երբեմն նոյնիսկ ընկերաբար յանդիմանում են «Հաստ կօխկըտ կըտըրվէ» (հաստ կողդ կտրուի), «Աստուծ կըտըրցընէ շան խասայթըտ» (Աստուած վերացնի շան բնաւորութիւնը): Սրանք կարելի է որակել նաեւ խրատական յանդիմանութիւններ, մինչդեռ նենգ ու խարդախ արարքը արժանանում է բոլոր սահմաններն անցնող՝ «օխտը ըտըժանէ» (եօթարկանի) հայհոյանքների ու անեծքների, որոնց հեղինակները ամէն կերպ ձգտում են տալ արարքին համապատասխան եւ նոյնիսկ գերազանցող պատասխաններ. «Ընըճիճըէխ տըէճնաս» (արնաթաթախ դառնաս), «Մէլդիտ յըրա պըպըլպապայ անիմ» (դիակիդ վրայ պարեմ), «Մաղարըտ տափումը տիւնիմ» (մինուճարդ հողում դնեմ), «Տըփէրան փուշի հըվաքիս» (գետնից ալիւր հաւաքես) եւն.: Ասել է՝ իւրաքանչիւր անեծք իր իմաստով պայմանաւորուած է անիծողի՝ տուեալ պահի որոշակի վարքագծով, խօսքով, արարքով, վերաբերմունքով:

Ըստ էութեան լինելով պատժի ցանկութիւններ՝ անեծքները իմաստային տիպաբաժանման դէպքում վերածւում են պատժի ցանկութեան տեսակների: Ըստ Յարութիւնեանի՝ դրանք չորսն են՝ մարմնական պատիժների ցանկութիւն, ընկերային-քաղաքացիական պատիժների ցանկութիւն, բարոյամարմնական պատիժների ցանկութիւն, հոգեկան պատիժների ցանկութիւն:

Մարմնական Պատիժներ²

Արցախեան անեծքներում աւելի յաճախ արտայայտւում է մարմնական պատիժների ցանկութիւնը: Ինչ խօսք, որ ամենախիստ պատիժը անիծողին մահուան դատապարտելն է: Անիծողը փափագում է անիծողի բնական մահով մեռնելը՝ «Քօն ինիս, յէր չի կէնաս» (քնես, չարքնանաս), սպանուելը՝ «Գյուլլոխարավ տըէճնաս» (գնդակածէճ դառնաս), մանուկ կամ ծաղկուն հասակում մեռնելը՝ «Վէ՛ չ մըճանաս, վէ՛ չ ծաղկիս» (ո՛չ մեճանաս, ո՛չ ծաղկես), հարազատների մահը՝ «Մաղարըտ թաղիմ» (մինուճարդ թաղեմ), «Ազիզըտ մըէտնէ» (հարազատդ մեռնի), «Բալալարըտ կըտօրվիւն» (զաւակներդ կոտորուեն):

Հիւանդութեան Եւ Ցաւի Պատիժներ

Բազմաթիւ անեծքներում արտայայտւում է անիծողին հիւանդութեամբ, մարմնական ցաւերով, կուրացած, անդամալուծուած, մարմնական տանջանքների եւ փորձանքների ենթարկուած տեսնելու տենչը. «Չառը պըկէտ վէր կյա» (հիւանդութիւնը կոկորդիդ իջնի), «Քուտանաս, չուլխանաս, քըռանաս» (կուրանաս, կաղանաս, խլանաս), «Յաքը շըլակիս, շէմբաշէն շօտ կյաս» (մացառը շալակես, գիւղեգիւղ շրջես), «Օխձը կըծէ քըլէգ» (օձը խայթի քեզ):

Ունեզրկման, Աղքատացման Պատիժներ

Ընկերային-քաղաքացիական անեծքներում ներկայացում են հակառակորդի ունեզրկման եւ ծայրայեղ աղքատացման, ինչպէս նաեւ անտէր, անընտանիք, անսերունդ մնալու գաղափարները, որոնք կարելի էր նախապայմաններ են մարդկութեան գոյատեւման համար. «Տոնըտ էրվի, պըրիշակ տըւոնա» (տունդ հրդեհուի, աւերակ դառնայ), «Տանըտ բարաքայթը կըտըրէ» (տանդ բարիքը վերանայ), «Միներտ էրկու չի տըւոնա» (մէկդ էրկու չդառնայ), «Մըւըմըտ կըտըրվէ» (սերմը վերանայ), «Պէժիւքըտ կապած մընա» (օժիտդ կապած մնայ), «Օգյօղ տըւոնաս, ըղնիս տըոնէրը, մին կուտուր հաց չի քըթէնաս» (մուրացկան դառնաս, դոնէ-դուռ ընկնես, մի կտոր հաց չգտնես), «Անդար մընաս» (անտէր մնաս), «Մըրթամըւտ մընաս» (առանց ամուսին մնաս), «Ֆուլխու իրըւս չի տըւս-նաս» (երեխայի երես չտեսնես):

Բարոյական-Մարմնական Պատիժներ

Բարոյամարմնական անեծքների նպատակն է անիծուողին ենթարկել բարոյական եւ մարմնական պատիժների: Անիծուողը փափագում է տեսնել նրան աստուածային պատժի ենթարկուած՝ անյիշատակ ու անմուրազ, անպատուած, հարազատների յիշատակը պղծուած. «Աստուծ քու դուվանըտ անէ» (Աստուած քեզ դատի), «Յէոնայինը քըւեզ պատժի» (երկնայինը քեզ պատժի), «Աստուծ անըմըտ կըտըրըցընէ» (Աստուած անունդ վերացնի), «Բէյմուրազ մընաս» (առանց երազանքի մնաս), «Մըւալըտ շըները քաշքաշ անին» (Մեռելդ շները քաշքշեն), «Մըւէվ վըւ-ղէն արժան չի տըւոնաս» (սեւ հողին չարժանանաս):

Հոգեկան Պատիժներ

Հոգեկան պատժի անեծքները ընդգրկում են անիծուողին կամեցուող հոգեկան տանջանքների, տառապանքների ցանկութիւններ՝ հոգու կորստեան եւ տանջանքի, տխրութեան եւ վշտի, սգոյ եւ սգաւորութեան «Ջըհանդամը քյինիս» (դժոխքը գնաս), «Հուրյիտ ըրըխավըտ տուս կյա» (հոգիդ բերանովդ դուրս գա), «Օրախ օր չի տըւեսնաս» (ուրախ օր չտեսնես), «Աշըղ տըւոնաս, ըղնիս տըոնէրը» (աշուղ դառնաս, ընկնես դոնէրը), «Շուվանը ըղնէ տօնըտ» (սուգն ընկնի տունդ):

Բ. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ

Օրհնանքներն իրենց արծարծած գաղափարներով բաժանում են երկու խմբի՝ ապահովութեան եւ պահպանութեան³:

Առաջին խմբի օրհնանքներում հիմնականը օրհնուող անձի կամ նրա մերձավորների վիճակը աւելի լաւով փոխարինելու ապահովութեան

փափագն է, իսկ երկրորդ խմբի օրինանքներում՝ տուեալ վիճակի պահպանութեան ապահովութեան:

Արցախահայ բանահիւսութեան մէջ ե՛ւ քանակով, ե՛ւ բազմազանութեամբ աչքի են ընկնում բարօրութեան բանաձեւերը, որտեղ խօսողը խօսակցին ցանկանում է երկար ու ապահով, բարեկեցիկ կեանք, յաջողութիւն, հոշակ, իղձերի իրականացում, բարեյաջող ամուսնութիւն, երջանկութիւն ու սէր, ողորմածութիւն, հոգեկան հանգիստ, օջախի շէնացում, բազմազանական ընտանիք. «Ումբըրըտ երկան ինի» (կեանքդ երկար լինի), «Տաշտըտ միշտ լիզը ինի» (տաշտդ միշտ լիքը լինի), «Անիս՝ օտիս, անիս վէ՝ օտիս» (անես՝ ուտես, չանես՝ ուտես), «Միներտ հրգգար տըռնա» (մէկդ հազար դառնայ), «Տօներտ շէն կէնա» (տունդ շէն մնայ), «Ըներմվեր տըռնաս» (անուանի դառնաս), «Ըշտըեղ կօխիս՝ կընանչի» (որտեղ կոխես՝ կանաչի), «Աստուծ մուրազըտ կըղարե» (Աստուած երազանքդ կատարի), «Պարավ կըրնչ-կյարմուրըտ կապիս» (բարով ամուսնանաս), «Մին պերցու ծըրանաք» (մի բարձի ծերանաք), «Ըղօրմի քա հօր» (ողորմի քո հօրը), «Աստուծ համփերութիւն տա» (Աստուած համբերութիւն տայ), «Օջաղըտ շէն կէնա» (օջախդ շէն մնայ), «Թուռնատար, ծուռնատար տըռնաս» (թոռնատեր, ծոռնատեր դառնաս):

Պահպանութեան օրինանքների մէջ օրինուող անձի կամ նրա հարազատների կեանքի, ունեցուածքի պահպանման գործի, չարից ու փորձանքից ազատ լինելու, Աստծոյ, սրբերի, Քրիստոսի, հրէշտակների հովանաւորութիւնը վայելելու գաղափարների արտայայտումն է՝ «Աստուծ պահե քյըեզ» (Աստուած պահի քեզ), «Աստուծ պահե մաղարըտ» (Աստուած պահի միհուճարիդ), «Ըստըծու ծըերքը տանըտ յըրան ինի» (Աստծոյ ձեռքը տանդ վրայ լինի), «Շառա, փուրցանքա հըռե ինիս» (շառից, փորձանքից հեռու լինես), «Վըրենըտ քարունի չի կյա» (ոտքդ քարին չդիպչի), «Աստուծ եզգանան կօխկէտ ինի» (Աստուած միշտ կողքիդ լինի), «Լըհատակը դըլվումըտ ինի» (սուրբ նահատակը թիկունքիդ կանգնի):

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Բանահիւսութեան տարրերից են նաեւ հանելուկները: Հանելուկի սեռը ենթադրում է աւարտուն ու պարզ բանաձեւեր, կոտ, հակիրճ շարադրանք: Այն փոքր ծաւալի սեղմ ձեւակերպումներով ներկայացնում է ժողովրդի զարգացման ընթացքը, նրա կացութեան, աշխարհայեացքը, բարոյաեղբանական առանձնայատկութիւնները:

Հանելուկների ծագումը շատ հին է եւ լիովին չբացայայտուած: Գիտնականների մեծ մասը կարծում է, որ այդ սեռի ստեղծագործութիւնները սկզբնապէս հանդէս են եկել որպէս նախնական մտածողութեան արտայայտութեան ձեւերից մէկը, եւ դրանց ծագումը կապում է նախամարդու պայմանական խօսքի հետ: Հնագոյն ցեղերի անդամները հա-

մոգուած էին, որ շրջապատող բուսական եւ կենդանական աշխարհը ապրում է գիտակից կեանքով եւ հասկանում է մարդկային լեզուն, ուստի, խուսափելով որոշ առարկաների անունը տալուց, նրանց մասին խօսելիս գործածում էին այլեւայլ արտայայտութիւններ, ինչը եւ, հաւանական է, հիմք է հանդիսացել բանահիւսական այդ սեռի ստեղծմանը:

Հանելուկ բառը ծագում է հանել բայից, որ գրաբարում նշանակում էր *«ի ներքուստ արտաքս, կամ ի խորոց ի վեր ձգել, արտաքսել, ի բաց տանել, ի դուրս տալ»*⁴, այսինքն՝ բացայայտել, գուշակել, վեր հանել խոր թաքնուած ներքին իմաստը: Արցախահայ բարբառում այն ծանօթ է պընզըլ, պունզըլ ձեւերով, որոնք հնչիւնափոխուած տարբերակներն են հին հայերէնի բանկն կամ բանգն բառի եւ ունեն «այլաբանական, առասպելական ստահող պատմութիւն»⁵ իմաստը՝ «պընզըլ պէն ա՛» (սուտ բան է), «ըսըծնէն սաղ պունզըլ ա՛» (ասածներն ամբողջութեամբ սուտ են) եւն.:

Հանելուկները, չնայած իրենց տարբեր դրսեւորումներին, համախմբում են որոշակի ոճական ձեւի մէջ, որի պարզագոյն տարբերակը հարցն է, որը պահանջում է պատասխան: Պատահական չէ, որ գերմանացի գիտնական Ֆրիդրիխը այն անուանել է հարցահանելուկ: Արցախեան իւրաքանչիւր հանելուկ պահպանել է հարցադրման եղանակը, որը դրսեւորում է մի շարք հարցական բանաձեւումների ձեւով՝ «էն հինչըն ա՞» (այն ի՞նչն է), «էն հինչ պէն ա՞» (այն ի՞նչ բան է), «էն հու վա՞» (այն ո՞վ է) եւն.:

Հանելուկներն աչքի են ընկնում իրենց առանձնայատկութիւններով, որոնցից ամենաընդհանուրը նրանց կառուցուածքն է: Ամէն մի հանելուկ բաղկացած է հանելուկի բուն նշանակութիւնից եւ արտաքին պատկերից, որոնք որոշակիութեան իմաստով տարբերում են իրարից, չնայած ունեն նաեւ ներքին ինչ-որ կապ: Գուշակողի խնդիրն է բացայայտել իրենից անկախ գոյութիւն ունեցող նմանութիւնները, ինչը հենց հանելուկի լուծումն է: Հանելուկային բուն նշանակութեան եւ արտաքին պատկերի կերպաւորման ամենատարածուած եղանակը այլաբանութիւնն է, որը Յարութիւնեանը բաժանել է հետեւեալ տեսակների⁶.-

ա) Այլաբանութիւն ըստ արտաքին նմանութեան, երբ արտաքին պատկերի եւ բուն նշանակութեան միջեւ նկատում է արտաքին որեւէ ընդհանուր գիծ. «Ծին քինաց, թամբը մընաց» (ձին գնաց, թամբը մնաց) (գետ եւ կամուրջ): Այստեղ այդ արտաքին նմանութիւնը շարժման հանգամանքն է, եւ գետի հոսելու յատկանիշը փոխաբերուել է գնալու հետ:

բ) Այլաբանութիւն ըստ գործառական նմանողութեան, երբ հանելուկային եւ այլաբանական առարկաները համընկնում են որեւէ յատկութեամբ, գործառութեամբ, ինչպէս՝ «Ա՛լ յըզնը, չա՛լ յըզնը, հիշքան պէռնիմ՝ տար յըզնը» (ալ եզ, չալ եզ, ինչքան բարձեմ, տար եզ) (դգալ, որ-տեղ

դգալը այլաբանուել է եզան հետ իր մի բան կրելու, տանելու յատկութեան պատճառով:

զ) Այլաբանութիւն ըստ յատկանիշների հակաբանական գուգորդման: Սա այն դէպքն է, երբ արտաքին աշխարհի առարկաների գծերն ու յատկանիշները դասաւորում են այնպէս, որ այլաբանական պատկերը վեր է ածուում անիրական, արտասովոր, ոչ-տրամաբանական երեւոյթի կամ հասկացողութեան. «Մըսէ շամփուր, ըրկաթէ խըրաված» (մսից շամփուր, երկաթէ խորոված) (մատ եւ մատանի), «Միք ըմ տամ, ծիք՝ կըրճանըմ ա» (ձգում եմ, ձգում՝ կարճանում է) (ծխախոտ):

Մրանից էապէս տարբերում է հանելուկների մի շարք, որտեղ բուն նշանակութեան եւ արտաքին պատկերի միջեւ որեւէ տարբերութիւն չկայ, եւ հանելուկի երեւոյթն ու էութիւնը համընկնում են իրար: Դրանք իրենք անուանում են իրենց լուծումը. «Կա՛ թես, կա՛ թես, անըմը տամ՝ գլիդաս վէ» (վերցրու թիս, վերցրու թիս, անուըն տամ, չիմանաս)՝ բահ, թի, «Ալազ, փալազ, անըմը տամ՝ չըգլիդաս» (ալաս, փալաս, անուըն տամ, չիմանաս)՝ փալաս:

Ընդհանուր առմամբ, հանելուկներում առարկաների բազմակողմանի բնութագրումներ չեն տրուում, եւ հաշուի է առնուում առարկայի ոչ-էական, երկրորդական նշանակութիւն ունեցող որեւէ կողմը կամ յատկանիշը: Հենց դա է պատճառը, որ նոյն առարկայի վերաբերեալ կազմուել են տարբեր հանելուկներ, որոնցից իւրաքանչիւրում հիմք է ընդունուել այս կամ այն յատկութիւնը: Օրինակ՝ «Մին պօլիգ, մաչին երկու ջուռոռ ճուր» (մի պուլիկ, մէջը երկու տեսակ ջուր), «Հուլօր ա, պուլլօր ա, մազ օնէ, ծակ չօնէ» (ուլօր է, կլօր է, մազ ունի, անցք չունի), «Մին տօն օնինք՝ պատերը արծաթ, մաչը վընկէ, վեր քընդեցէ, էլ շինվիլ չի» (մի տուն ունենք՝ պատերը արծաթ, ներսը ոսկի, եթէ քանդեցիր, էլ չի շինուի) ստեղծագործութիւնները բնութագրում են ձուն, ընդ որում՝ առաջինի մէջ նկատի է առնուել սպիտակուցի եւ դեղնուցի առկայութիւնը, երկրորդի մէջ՝ ձուի՝ անցք չունենալը, բայց նրանից մազաւորի ճտի առաջնաւալը, երրորդի մէջ՝ ձուի կեղեւի արծաթագոյն, իսկ դեղնուցի ոսկեգոյն լինելու երեւոյթը: Դրան հակառակ՝ արցախցին ստեղծել է հանելուկներ, որոնք կարող են ասուել տարբեր, նոյնիսկ սեռով, տեսակով իրարից հեռու առարկաների վերաբերեալ: Դրանք այնուամենայնիւ ունեն ինչ-որ ընդհանուր գիծ. «Տուը վընկըռ, մաչը մէս» (դուրսը՝ ոսկոր, ներսը՝ միս) կրիա, ընկոյզ, «Ալալա, բալալա, տար խաղ ըրա, պեր կախ ըրա» (ալալա, բալալա, տար խաղայ, բեր կախիր)՝ սագ, թառ, մաղ:

Սակայն արցախահայ բանահիւսութեան մէջ հանդիպում են նաեւ երկակի, եռակի, բազմակի լուծման առարկաներ ունեցողներ, ինչպէս. «Մին թումբ տըրէ, թումբէն տակէն մին դուզ տըրէ, դուզին տակէն երկու ծառ, ծառէն տակէն երկու գլօլ, գլօլէն տակէն երկու նօվ, նօվէն տակէն մին

ճեղաց, ճրդացեն տակէն մին թումբ» (մի բլուր, բլրի տակ մի հարթ տեղ, հարթութեան տակ երկու ծառ, ծառի տակ երկու լիճ, լճի տակ երկու գուռ, գուռի տակ մի ջրաղաց, ջրաղացի տակ մի բլուր)՝ գլուխ, ճակատ, յօնքեր, աչքեր, քիթ, բերան, դունչ:

Բազմազան ու բազմաբնոյթ է արցախեան հանելուկների թեման: Հանելուկային առարկաների եւ բանաձեւերի մեջ արծարծուել են արցախցուն շրջապատող բուսական եւ կենդանական աշխարհը, տնտեսական զբաղմունքները, երկրային ու երկնային մարմիններն ու երեւոյթները, այն, ինչ հնարաւոր է տեսնել, լսել, զգալ: Պատահական չէ, որ այս սեռում առաջին հերթին արտացոլուել են գիւղատնտեսութեան տարբեր բնագաւառների կապուած երկրի տնտեսական բնոյթի երեւոյթներ:

Արցախցու համար կարեւոր բնագաւառ է երկրագործութիւնը, որ հնուց ի վեր հանդիսացել է հիմնական զբաղմունքներից առաջնայինը: Այսպէս «Մին արտ օնիմ, վարվել չի, մաչի քարերը հըմբարվել չի» (մի արտ ունեմ, չի վարուի, մեջի քարերը չեն համրուի)՝ երկինք եւ աստղեր. հանելուկի մեջ ժողովուրդը երկնքի անծայրածիր լինելը կապել է մեծ հողատարածութեան, իսկ աստղերի առատութիւնը՝ արցախեան հողերում այնքան տարածուած քարերի հետ: Կամի եւ եգների նկարագրութիւնն է տրուած «Կըլօխը փաղ, տակը քար, օթ վըննանէ երկու սար» (վերելք փայտ, տակը քար, ութտանի երկու սար) ստեղծագործութիւնում:

Ստուար թիւ են կազմում հողագործական տարբեր գործիքների նուիրումը հանելուկները. «Մին կութանէ, հարուր ըրխանէ, կօտէ, կօտէ, էլիա լըղար» (մի բռնակ ունի, հարիւր բերան, ուտում է ուտում, էլի նիհար)՝ մանգաղ, «Մին ջանավար կա՝ հիշքան ըտէխըն ընք տամ, քուշտանըմ չի» (մի գազան կայ, ինչքան կերակրում ենք, չի կշտանում)՝ ջրաղաց:

Տարածուած են նաեւ այգեգործութեանը եւ բանջարագործութեանը նուիրումը ստեղծագործութիւնները, որտեղ բնութագրում են բազմաթիւ մրգեր, պտուղներ, բանջարեղէններ, ինչպիսիք են ընկոյզը, նուռը, մասուրը, մոշը, մորին, հոնը, թութը, խաղողը, դդումը, ձմերուկը, բողկը, գազարը, սոխը, եգիպտացորենը՝ «Տուսը աղու, մաչը քախճըր» (դուրսը դառը, ներսը քաղցր)՝ ընկոյզ, «Շօրերը հանիմ, նըստիմ լաց ինիմ» (շորերը հանեմ, նստեմ լացեմ)՝ սոխ, «Քօսուտ թուլա լըվաշավ պէռնած» (քօստո բոթոթ, լաւաշով բարձած)՝ եգիպտացորեն, «Հարը դիքյ, մարը կըռ, խօխան խէլունք, թօնը պըլէ» (հայրն ուղիղ, մայրը կեռ, երեխան խելօք, թոռը գիժ)՝ խէչմար, վագ, խաղող, գինի եւն.:

Երկրագործութեանը զուգընթաց արցախցին զբաղուել է անասնապահութեամբ, թռչնաբուծութեամբ, մեղուաբուծութեամբ, շերամապահութեամբ՝ ստեղծելով տասնեակ հանելուկներ, որտեղ որպէս հանելուկային առարկայ կամ արտաքին պատկեր հանդէս են գալիս եզը, կո-

վը, գոմէշը, էշը, ոչխարը, այծը, ուղտը, հաւը, շերամորթը, մեղուն. «Մըել յըզըն լուխեցէն, խօխէնքը ուրխացէն» (սէւ եզը բարձեցին, երեխաները ուրախացան) բով եւ հաց, «Բնքը սարէն յըրա, սարը մաշկէն յըրա» (ինքը սարի վրայ, սարը մէջքի վրայ) ուղտ, «Մըռէյիս ինքը ուրան հանգիստը կըտըրըմ ա» (մեռնելիս ինքն իր գերեզմանոցը փորում է) շերամորթ...:

Որոշ գործերում արձագանգ են գտել Արցախում տարածուած արհեստները. «Կանաչ հինիմ, սպիտակ թիւ տամ, կյարմուր կյօրծիմ, թօխ կըտըրիմ» (կանաչ հինեմ, սպիտակ թել տամ, կարմիր գործեմ, սէւ կտրեմ)՝ մոշ, «Հէնգ ախպէր՝ մինը քար ա կըրըմ, մըռկալը պատ ընշարըմ» (հինգ եղբայր՝ մէկը քար է բերում, միւսները պատ են շարում)՝ գուլպայի ճաղեր: Այս հանելուկներից առաջինում տրուում է ոստայնագործութեան, իսկ երկրորդում՝ որմնադրութեան ընդհանուր նկարագրութիւնը: Առաւել յաճախակի են հանդիպում կենցաղում գործածուող տարբեր առարկաներ՝ բով, մաղ, շերեփ, դգալ, ճախարակ, կուծ, ասեղ, գուլպայ, սանդերք, փափախ եւն.:

Հանելուկային առարկայ են դարձել նաեւ երկինքը, երկնային մարմինները, բնութեան տարբեր երեւոյթները՝ աստղերը, ամպը, որոտը, անձրեւը, կարկուտը, կայծակը, ծիածանը, ձիւնը, քամին: Առաւել ընդգծում են արեւն ու լուսինը, որոնք ներկայանում են մե ըթ քրօջ ու եղ-բօր, մե ըթ հով ու տաք բովի, մե ըթ անծայրածիր արտում վազվզող եր-կու կաքաների, մե ըթ էլ պղնձէ կաթսայի մէջ դրուած ձուերի տեսքով: Որոշ ստեղծագործութիւններում հանդէս են գալիս ժամանակի միաւոր-ները. «Մին ծառ օնիմ՝ տըսըրերկու ճըղնանէ, ամմէն ճըղնանը ուրօսուն տիրըել՝ կէսը սիպտակ, կէսը սըել» (մի ծառ ունեմ՝ տասներկու ճիւղանի, իւրաքանչիւր ճիւղի վրայ երեսուն տերեւ՝ կէսը սպիտակ, կէսը սէւ)՝ տարի, ամիսներ, օրեր, «Ծըմըտն ա կյարունքը պատէն, ամըտն ա կյարունքը պատէն» (ձմեռ է՝ գարունը պատին, ամառ է՝ գարունը պատին)՝ գորգ:

Արցախեան հանելուկները աչքի են ընկնում նաեւ իրենց ինքնատիպ ու բարդ արուեստով, կառուցուածքային բազմազանութեամբ, գեղարուեստական արտայայտամիջոցների լայնակի դրսեւորմամբ, տաղաչափութեամբ:

Մրանցով չեն սպառում արցախեան առած-ասացուածքների, անէծք-օրհնանքների ու հանելուկների մէջ արծարծուած թեմաներն ու երեւոյթները: Իրականում դրանք բազմաթիւ են ու բազմազան: Մակայն ամենակով ժամանակը իր բացասական ազդեցութիւնն է ունեցել նաեւ այս բնագաւառում, եւ պատահական չէ, որ բանաւիւսական այլ սեռերի հետ աստիճանաբար պատմութեան գիրկն են նետում նաեւ բա-

նաձեւային բանահիւտութեան գոհարները, ինչը եւ աւելի հրատապ է դարձնում դրանց հաւաքումը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Այս եւ յօդուածում բերուած միւս բոլոր օրինակների համար տե՛ս՝ Ա. Սարգսեան, *Արցախի Բանաձեւային Բանահիւտութիւնը*, Ստեփանակերտ, Դիզակ Պլիւս Հրատ., 2009:
- ² Սարգիս Յարութիւնեան, *Անեծքը եւ Օրհնանքը Հայ Բանահիւտութեան Մէջ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1975, էջ 199:
- ³ Նոյն, էջ 249:
- ⁴ *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. II*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1981, էջ 45:
- ⁵ *Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Հտր. I*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1979, էջ 437:
- ⁶ Սարգիս Յարութիւնեան, *Հայ Ժողովրդական Հանելուկներ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Հրատ., 1960, էջ 16:

THE CHARACTERISTICS OF THE STANDARDIZED/FORMULATED ORAL FOLKLORIC SAYINGS OF ARTSAXH (SUMMARY)

ARMEN SARKISIAN
armen.sarkisyan.68@mail.ru

The author categorises the standardized oral folkloric statements of Artsakh. He groups them in the conventional categories of proverbs and sayings, blessings, curses, puzzles/enigmas.

The author highlights the characteristics of these categories and, as a general note, he concludes that these reflect the perceptions of the Artsakh people, their moral values, their lifestyle, their work ethics, etc. The author underlines the fact that due to world sociological and technological changes these oral creations have started to disappear. Particularly with changes in the socio-political sphere, a large number of proverbs have ceased to exist, like the one which says "*Alin ketsaw, Valin yegaw*" (Ali went and Wali came, i.e. a foreign occupier left and a new one came).